Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 404 - Ա
որոշման

«ԼԵՌՆԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ՋՐԱՄԲԱՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Լոռու մարզի Սպիտակ համայնքի Լեռնավան բնակավայրում կառուցել 10000 մետր խորանարդ ծավալով ջրամբար՝ ապահովելու գյուղատնտեսական նշանակության հողատարածքներին կայուն ոռոգման ջրով, բարելավելու բնակավայրի բնակչության սոցիալ-տնտեսական վիճակը:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	Ճապոնիայի կառավարություն՝ ի դեմս Հայաստանի Հանրապետությունում Ճապոնիայի դեսպանության (Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան 0037, Բաբայան փողոց 23/4)
4.	Ծրագիրը կատարողը	«Սպիտակ-Ֆերմեր» գյուղատնտեսությանը աջակցող ասոցիացիա հասարակական կազմակերպություն (Հայաստանի Հանրապետության Լոռու մարզ, քաղաք Սպիտակ, Ալեք Մանուկյան 5/1, ՀՎՀՀ՝ 06804407)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի Լեռնավան բնակավայր, բնագավառը՝ համայնքային զարգացում
6.	Ծրագրի բյուջեն	45,881,400 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնք
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2026 թվականի հուլիսի 15-ից մինչև 2026 թվականի հոկտեմբերի 31-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1) Լոռու մարզի Սպիտակ համայնքի Լեռնավան բնակավայրում 10000 մետր խորանարդ ծավալով ջրամբարի կառուցում, նախատեսվում է իրականացնել 2026

		թվականի հուլիսի 15-ից մինչև 2026 թվականի հոկտեմբերի 31-ն ընկած ժամանակա-հատվածում՝ 44,915,080 դրամի չափով. 2) աուդիտի իրականացում, նախատեսվում է իրականացնել 2026 թվականի հուլիսի 15-ից մինչև 2026 թվականի հոկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում՝ 966,320 դրամի չափով:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1) Լոռու մարզի Սպիտակ համայնքի Լեռնավան բնակավայրում 10000 մետր խորանարդ ծավալով ջրամբարի և հարակից խողովակաշարի կառուցման աշխատանքների իրականացում՝ 44,915,080 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի. 2) աուդիտորական ծառայությունների ձեռքբերում՝ 966,320 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Աուդիտորական ծառայությունների ձեռքբերում՝ 966,320 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Լոռու մարզպետի աշխատակազմի և Սպիտակի համայնքապետարանի աշխատա-կազմի հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված՝ բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ ծրագրի ընթացքի և արդյունքների մասին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

07.07.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ